



Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն
Քննության ամփոփ ուղեցույց
Հայոց պատմություն

Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական
զարգացման և հավաստագրման ծրագրի դիմորդ-ուսուցիչների
2018 թ. քննաշրջանի համար

Հարցերի դեպքում գրե՛ք մեզ
Էլ. փոստ՝ ab_teachers@abedu.am

հեռ. +374 93 52 37 17

Բովանդակություն

1. «Հայոց պատմություն» առարկայի քննաթերթիկի կառուցվածք
2. Առարկայի քննական բովանդակություն
3. Գնահատման սկզբունքներ
4. Գնահատում
5. Ընդհանուր խորհուրդներ
6. Չարտոնված նյութեր
7. Քննության ընթացք
8. Քննության ավարտ
9. Արդյունքների վերանայում եւ միավորների վերահաշվարկ
10. Քննաթերթիկի նմուշ

«Հայոց պատմություն» քննաթերթի կառուցվածք

Քննաթերթի կազմված է 2 մասից:

Մաս 1-ին

Սկզբնաղբյուր՝ 4 հարց:

Մաս 2-րդ

Քաղվածք՝ 4 հարց:

Յուրաքանչյուր մասում ներկայացված է նույն թեմայի վերաբերյալ պատմական 2-3 աղբյուր (նամակ, նկար, ճառ, ելույթ, պատմաբանի տեքստ): Անհրաժեշտ է պատասխանել 4 հարցի՝ հիմք ընդունելով տրված աղբյուրներում առկա փաստեր, ինչպես նաև, հարկ եղած դեպքում, տվյալ աղբյուրի համատեքստին առնչվող պատմական այլ տվյալներ: Յուրաքանչյուր մասի համար անհրաժեշտ է ներկայացնել առավելագույնը 300 բառ ծավալով աշխատանք:

Քննության տևողությունը՝ **2 ժամ**:

Առարկայի քննական բովանդակություն

1. Ազգային ազատագրական շարժումները. գաղթօջախներից դեպի հայրենիք. հայոց պատմությունը նոր դարաշրջանում
 - 1.1 Նոր իրականություն. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսական կայսրությանը
 - 1.2 Քաղաքական նոր իրողություն
 - 1.3 Արյունոտ սուլթանը՝ Աբդուլ Համիդ II
 - 1.4 Մեծ պատերազմը. Համաշխարհային առաջին պատերազմը
 - 1.5 Հայոց ցեղասպանությունը 1915-1923 թթ.

2. Հայաստանը նորագույն շրջանում, 1918 թ. մինչև 21-րդ դար
 - 2.1 Մեծ ծնունդ. հայոց պետականության վերականգնումը 1918 թ.
 - 2.2 Կարմիր տենդ. Հայաստանի խորհրդայնացումը
 - 2.3 Բռնաճնշումներն ու Անհատի պաշտամունքը
 - 2.4 Ձևալի ժամանակաշրջանը Ստալինի մահից հետո
 - 2.5 Տնտեսական էքստենսիվ զարգացում
 - 2.6 Երկար սպասված ազատություն. Հայաստանը ինքնորոշման շրջափուլում
 - 2.7 Վճռական ընտրություն ազատության և անազատության միջև. Հայաստանի Հանրապետության հռչակումը 1991 թ.
 - 2.8 1988 թ. երկրաշարժ և Արցախյան շարժում

Թեմա 1. Ազգային ազատագրական շարժումները, գաղթօջախներից դեպի հայրենիք, հայոց պատմությունը նոր դարաշրջանում

<i>Ենթաթեմա</i>	<i>Դիմորդը պետք է կարողանա՝</i>
<p>1.1 Նոր իրականություն. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսական կայսրությանը</p> <p>Գրաբարից աշխարհաբար. Հայաստանը հաջատուր Աբովյանի ժամանակներում</p>	<ul style="list-style-type: none"> - Ներկայացնել Ռուսական կայսրությանը Արևելյան Հայաստանի միանալու ընթացքը, գնահատել արդյունքներն ու հետևանքները - Ներկայացնել մշակութային իրողությունը Հայաստանում 19-րդ դ. առաջին կեսին - գնահատել գրականության՝ աշխարհաբարի անցման քաղաքակրթական նշանակությունը հայկական մշակութային, քաղաքական հետագա զարգացումներում
<p>1.2 Քաղաքական նոր իրողություն</p> <p>Հայ ազգային-ազատագրական շարժման նոր փուլ</p> <p>Քաղաքական կուսակցությունների ձևավորումը հայ իրականության մեջ</p>	<ul style="list-style-type: none"> - Ներկայացնել քաղաքական կուսակցությունների հասունացման և հիմնման պատմական հանգամանքները - Ներկայացնել և բացատրել քաղաքական կուսակցությունների գաղափարական ուղղվածության պատճառները - գնահատել կուսակցությունների դերն ազգային ազատագրական շարժման ընթացքում
<p>1.3 Արյունոտ սուլթանը՝ Աբդուլ Համիդ II</p> <p>Հայերի զանգվածային կոտորածների առաջին փուլը Օսմանյան կայսրությունում</p> <p>Հայկական հարցի միջազգայնացումը</p>	<ul style="list-style-type: none"> - Ներկայացնել Արևելք-Արևմուտք աշխարհաքաղաքական իրադրությունը Համիդյան կոտորածների նախօրեին - վերհանել և փաստարկել Սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից հայերին զանգվածաբար ոչնչացնելու ընթացքը որպես Օսմանյան կայսրության պետական քաղաքականություն - գնահատել հայ քաղաքական վերնախավի դիրքորոշումը Համիդյան կոտորածների հանդեպ - Ներկայացնել Հայկական հարցի միջազգայնացման պատմական ընթացքը և զարգացումները
<p>1.4 Մեծ պատերազմը. Համաշխարհային առաջին պատերազմը.</p> <p>Հայերը և Առաջին աշխարհամարտը</p>	<ul style="list-style-type: none"> - Նկարագրել միջազգային հարաբերություններն աշխարհում Առաջին աշխարհամարտի նախօրեին - Ներկայացնել հայ քաղաքական վերնախավի դիրքորոշումը և գործողություններն Առաջին աշխարհամարտի նախօրեին - գնահատել հայերի մասնակցությունն Առաջին աշխարհամարտին
<p>1.5 Հայոց ցեղասպանությունը 1915-1923 թթ.</p>	<ul style="list-style-type: none"> - վերլուծել Հայոց ցեղասպանությանը նախորդած հանգամանքները, որոնք նախանշում և բացահայտում էին Օսմանյան կառավարության նպատակները - դիտարկել «ցեղասպանություն» հասկացությունը միջազգային իրավունքի տեսանկյունից - բացատրել Հայոց ցեղասպանության արտաքին և ներքին պատճառները - գնահատել Հայոց ցեղասպանության հետևանքները Հայոց պատմության հետագա ընթացքի համար

Թեմա 2. Հայաստանը նորագույն շրջանում, 1918 թ. մինչև 21-րդ դար

Ենթաթեմա	Դիմորդը պետք է կարողանա՝
<p>2.1 Մեծ ծնունդ. հայոց պետականության վերականգնումը</p> <p>Հայաստանի առաջին հանրապետությունը 1918-1920 թթ.</p>	<ul style="list-style-type: none"> - ներկայացնել Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման պատմական ընթացքը - զուգորդել և բացատրել աշխարհում նոր պետությունների առաջացման և Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման ընդհանուր միտումներն ու զարգացումները - ներկայացնել առաջին հանրապետության անկման ներքին և արտաքին հիմնական գործոնները - գնահատել առաջին հանրապետության դերը հայկական պետականության զարգացման մեջ
<p>2.2 Կարմիր տենդ. Հայաստանի խորհրդայնացումը</p> <p>խորհրդային կարգերի հաստատումը և Հայաստանի խորհրդայնացումը</p>	<ul style="list-style-type: none"> - ներկայացնել Ռուսաստանում փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխությունների պատմական ընթացքը և դրանց արտահայտությունը Հայաստանում - բացատրել Հայաստանի խորհրդայնացման ներքին և արտաքին ազդակներն ու պատճառները - գնահատել Հայաստանի խորհրդայնացման հետևանքներն ու արդյունքները
<p>2.3 Բռնաճնշումներն ու Անհատի պաշտամունքը</p> <p>Հայերը և Համաշխարհային երկրորդ պատերազմը</p>	<ul style="list-style-type: none"> - ներկայացնել խորհրդային Հայաստանում քաղաքական ու հասարակական կյանքը 1920-40-ական թթ. - բացատրել «անհատի պաշտամունք» հասկացությունը - բացատրել բռնաճնշումների պատճառները և ներկայացնել դրանց հետևանքները Հայաստանում քաղաքական ու հասարակական մտքի ձևավորման վրա - ներկայացնել ԽՍՀՄ-ում և ամբողջ աշխարհում հայերի մասնակցությունը Համաշխարհային երկրորդ պատերազմին
<p>2.4 Ձևալի ժամանակաշրջանը Ստալինի մահից հետո</p> <p>Սփյուռքից հայրենիք. հայրենադարձության փուլերը</p>	<ul style="list-style-type: none"> - ներկայացնել ԽՍՀՄ-ում տեղի ունեցած հասարակական փոփոխությունները Ստալինի մահից հետո և դրա անդրադարձները Հայաստանում - ներկայացնել հայերի՝ սփյուռքից կազմակերպվող հայրենադարձության փուլերը, հետևանքներն ու արդյունքները
<p>2.5 Տնտեսական էքստենսիվ զարգացում</p> <p>Գիտությունը և մշակույթը, առօրեական կյանքը խորհրդային Հայաստանում</p> <p>Մասնավորից մինչև կոլեկտիվ</p>	<ul style="list-style-type: none"> - ներկայացնել մասնավոր սեփականության բռնի ոչնչացումը և կոլեկտիվ տնտեսությունների հիմնումը Հայաստանում - ներկայացնել և գնահատել մասնավոր սեփականության ոչնչացման հետևանքները տնտեսական և հասարակական հարաբերություններում - գնահատել ԽՍՀՄ միակուսակցական քաղաքական համակարգի հետևանքները Հայաստանում

Թեմա 2. Հայաստանը նորագույն շրջանում, 1918 թ. մինչև 21-րդ դար	
<i>Ենթաթեմա</i>	<i>Դիմորդը պետք է կարողանա՝</i>
<p>2.6 Երկար սպասված ազատություն. Հայաստանը ինքնորոշման շրջափուլում</p> <p>Մեծ անկումներ և մեծ վերելքներ. ԽՍՀՄ փլուզումը և Հայաստանի անկախության հռչակումը</p>	<ul style="list-style-type: none"> - վերլուծել աշխարհում տիրող աշխարհաքաղաքական իրադրությունը, Սառը պատերազմի վերջին փուլը ԽՍՀՄ փլուզման նախաշեմին - ներկայացնել և գնահատել խորհրդային տարիներին ազգային ազատագրական շարժման գաղափարախոսության ընթացքը - ներկայացնել Հայաստանի ինքնորոշման և վերստին միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ դառնալու ներքին և արտաքին ազդակները - գնահատել անկախության և ինքնորոշման հանրաքվեի նշանակությունը հայկական պետականության շարունակականության համար
<p>2.7 Վճռական ընտրություն ազատության և անազատության միջև. Հայաստանի Հանրապետության հռչակումը 1991 թ.</p> <p>Արցախյան ազատագրական շարժումը</p>	<ul style="list-style-type: none"> - ներկայացնել Արցախյան շարժման ընթացքը, կարգավորման ձևերը և փուլերը - բացատրել «ինքնորոշում» հասկացությունը միջազգային իրավունքի տեսանկյունից - գնահատել Արցախյան շարժման նշանակությունը Հայաստանի ժամանակակից պատմության ընթացքում
<p>2.8 1988 թ. երկրաշարժ և Արցախյան շարժում</p> <p>1988 թ. Սպիտակի երկրաշարժը</p>	<ul style="list-style-type: none"> - ներկայացնել Սպիտակի երկրաշարժին հետևած պատմական ընթացքը - գնահատել երկրաշարժի հետևանքները Հայաստանի վերջին 25 տարվա պատմական զարգացումներում

Գնահատման սկզբունքներ

«Հայոց պատմության» քննությունը ստուգում է ստորև ներկայացված կարողությունները.

- ներկայացնել համակողմանի հիմնավորված պատասխաններ և մոտեցումներ,
- գտնել և ներկայացնել հնարավորինս շատ փաստարկներ տրված աղբյուրներից,
- փաստարկները ներկայացնել հստակ հղումներով,
- պատմական որևէ խնդրի վերաբերյալ գնահատականները տալ փաստերի համադրության, համեմատության և վերլուծության միջոցով:

Գնահատում

Բոլոր քննությունների անցողիկ շեմերը կաահմանվեն քննական արդյունքների ամփոփումից հետո:

Քննության ընթացք

Ներկա-բացակայի գրանցամատյանում վերահսկիչները հաշվառում են տվյալ քննությունը հանձնելու համար գրանցված բոլոր դիմորդներին, ստուգում անձը հաստատող փաստաթղթերը:

Քննության սկզբում վերահսկիչները դիմորդների համար կարդում են քննության հրահանգները:

Չարտոնված կյութեր

Դիմորդներին արգելվում է քննասենյակ տանել այնպիսի կյութեր կամ առարկաներ, որոնք կարող են տեղեկույթ պարունակել կամ այն հասանելի դարձնել:

Քննասենյակում չարտոնված կյութեր ունենալը կանոնների կոպիտ խախտում է և կարող է հանգեցնել քննության արդյունքների չեղարկմանը:

Չարտոնված կյութերի ցանկ

- տեղեկույթ պարունակող թերթիկներ
- պայուսակներ
- մատիտների ոչ թափանցիկ տուփեր
- ցանկացած փաթեթավորում, որի վրա կլինեն պատկերներ կամ տեքստեր (դիմորդները պետք է ուտելիքը, ըմպելիքը, մարտկոցները կամ այլ սարքեր տեղադրեն թափանցիկ պարզ փաթեթների մեջ)
- որևէ տեսակի համակարգիչ
- Էլեկտրոնային կամ ռադիո հաղորդակցության միջոցներ
- ձայնագրման սարքեր
- բջջային հեռախոսներ
- Էլեկտրոնային ընթերցանության կյութեր
- ցանկացած Էլեկտրոնային սարքավորում, որը հնարավորություն է ընձեռում արտաքին հաղորդակցության համար կամ տեղեկությունների պահպանման և վերարտադրման
- լուսանկարչական սարքեր
- ականջակալներ
- ոյուրակիր երաժշտական նվագարկիչներ

Սույն ցուցակը չի ներառում այն բոլոր կյութերը, որոնք կարող են համարվել «չարտոնված»: Կենտրոնի ղեկավարն ու վերահսկիչները կարող են «չարտոնված» համարել ցանկացած այլ առարկա, եթե դա կարող է քննասենյակում գտնվող դիմորդի համար ծառայել որպես տեղեկույթը թաքցնելու կամ ստանալու միջոց:

Բոլոր Էլեկտրոնային սարքերը, ներառյալ բջջային հեռախոսները և ականջակալները, խելացի ժամացույցները անջատված վիճակում դրվում են քննասենյակից դուրս:

Կանոնների խախտումը կարող է հանգեցնել դիմորդի որակագրվմանը:

Քննության ավարտ

Քննության ավարտին հինգ րոպե մնալու պահին վերահսկիչները դիմորդներին հայտնում են, թե ինչքան ժամանակ է մնացել:

Քննության ավարտից հետո դիմորդները պետք է՝

- դադարեցնեն գրելը,
- ստուգեն, որ գրավոր պատասխանում մուտքագրված լինի պահանջվող ամբողջ տեղեկույթը,
- հավաստիանան, որ պատասխանները ճիշտ են համարակալված:

Նախքան քննասենյակից դիմորդների դուրս գալը հավաքվում են բոլոր աշխատանքները:

Արդյունքների վերանայում և միավորների վերահաշվարկ

Արդյունքների ամփոփումից ու հրապարակումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում մասնակիցները կարող են ab_teachers@abedu.am Էլ. հասցեով գրավոր դիմել ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման բաժին (ԱԲ-ի ՈՒՄՉՀ)՝ աշխատանքի վերանայման և միավորների վերահաշվարկման խնդրանքով: ԱԲ-ի ՈՒՄՉՀ բաժինը բոլոր դիմումները փոխանցում է Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնին (ԱԲԲԿ): ԱԲԲԿ-ի մասնագետների խորհուրդը 5 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանում է բոլոր դիմումներին՝ ԱԲ-ի ՈՒՄՉՀ բաժնին տրամադրելով վերջնական արդյունքները:

Վերջնական արդյունքները որեւէ կերպ **բողոքարկման ենթակա չեն**: ԱԲԲԿ-ի և մասնակիցների միջև կապն ապահովվում է **միայն** ԱԲ-ի ՈՒՄՉՀ բաժնի միջոցով: Մասնակիցների գրավոր աշխատանքներն ԱԲԲԿ-ի սեփականությունն են և որևէ ձևով հրապարակման, որևէ մեկին (այդ թվում՝ մասնակցին կամ նրա ներկայացուցչին) տրամադրման ենթակա չեն:

Քննաթերթիկի նմուշ



Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն
ԱԲ ուսուցչի մասնագիտական զարգացման ծրագրի
դիմորդ-ուսուցիչների քննություն

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ 2017թ., մարտ
Տևողություն՝ 2 ժամ
Հավելյալ նյութ՝ Պատասխանների գրքույկ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել **Պատասխանների գրքույկի** կազմին գրված ցուցումներին:

Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:

Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր մասի համար անհրաժեշտ է ներկայացնել առավելագույնը 300 բառ ծավալով աշխատանք

Այս փաստաթուղթը բաղկացած է 7 տպագիր և 1 դատարկ էջերից:

ԲԱԺԻՆ Ա

Մեծ նվաճում. հայկական պետականության վերականգնումը դարեր անց:

1918 թ. Առաջին Հանրապետությունը:



Փաստաթուղթ-աղբյուր 1 - Հայաստանի Առաջին Հանրապետության 1919 թ. թողարկված դրամական միավորն է «ռուբլի» անվանումով:

Փաստաթուղթ-աղբյուր 2 - Ստորև ներկայացված են հատվածներ Հայաստանի Առաջին Հանրապետության 1918 թ. հունիսից մինչև 1919 թ. մարտ ընկած ժամանակամիջոցում վարչապետի պաշտոնը զբաղեցրած Հովհաննես Զաքազնունու 1919 թ. հունվարին Թբիլիսիում գտնվող իր կնոջը գրած նամակից:

1 «...Սիրելի՛ս, անձնապես եւ կյութապես ես ոչինչ գրկանք չեմ կրում, ունեմ բնակարան,
2 սնունդ, շոր, ծխախոտ, Լույսիսկ՝ շաքար: Շատ հաճախ, (համարյա ամեն օր) ճաշի Լստելիս ձեզ
3 եմ հիշում: Գիտեմ, թե ինչ Լեղութան մեջ պիտի լինեք դուք, գիտեմ, որ ամեն մի պատառ հացը,
4 ամեն մի կտոր միսը, ամեն մի կտոր փայտը հաշվով եւ խնայողաբար եք գործածում: Գիտեմ, որ
5 սենյակներիդ ցուրտ է, սնունդներիդ պակաս, շորերիդ պակաս ու գիտեմ, թե անձնապես դու որքան
6 հոգևած պիտի լինես շուկա գնալուց, խոհանոցում աշխատելուց, լվացք անելուց: Ես ստանում
7 եմ 1300 ռ. ռոճիկ եւ 500 ռ.՝ «Լեռկայացուցչության» համար: Այդ «Լեռկայացուցչությունը»
8 գլխավորապես՝ ստորագրություններ հօգուտ որբերին ու որբանոցներին, գաղթականներին,
9 գինվորներին, հաշմանդամներին եւ այլն, եւ այլն: Հավանական է, որ հունվարից սկսած բոլոր
10 պետական ծառայողների ռոճիկը ավելացվի 30 տոկոսով. եթե այդ օրենքը ընդունվի խորհրդի
11 կողմից, ես կստանամ 1733 ռ...»:

12 «...Կառավարությունը լարում է բոլոր ուժերը՝ մի ելք գտնելու, բայց անգոր է: Անգոր է եւ
13 արտաքին պայմանների շնորհիվ, եւ Լեռքին գիտության, փորձառության եւ տաղանդների
14 պակասության պատճառով: Պետական մարդիկ չունենք, սկսած ինձանից, որ պետության
15 գլուխն եմ կանգնած: Մինչեւ հիմա չենք կարողացել կազմակերպել կենտրոնական
16 վարչությունը՝ մինիստրությունները եւ մինիստրների խորհուրդը: Իմ Լախկին կաբինետը, որ
17 կազմված էր դաշնակցականներից (Արամ, Կարճիկյան) եւ չեզոքներից (գեն. Հախվերդյան,
18 Պետրոսյան), չդիմացավ, որովհետեւ մեծամասնություն չունեի իր ետեւը՝ խորհրդի
19 (պառլամենտի) մեջ: Ստիպված եղա Լոր կաբինետ կազմել հայ ժողովրդական կուսակցության
20 մասնակցությամբ: Սրանով մի մեքենայական մեծամասնություն ստեղծվեց խորհրդի մեջ (24
21 ձայն 43-ից), բայց Լեռքուստ անհամաձայնությունը, անվստահությունը, անտագոնիզմը, Լույսիսկ
22 փոխադարձ ատելությունը չվերացվեց...»:

23 «...500 տարի ստրուկ լինելուց հետո, մի ժողովուրդ վերածնվում է ազատ եւ ինքնուրույն
24 կյանքի համար: Եթե ես Լայում եմ մեր խղճուկ խորհրդին (պառլամենտին), կառավարությանը,
25 մեր պաշտոնյաներին, մեր վարչական կազմին, ուզում եմ բռնալ հուսահատությունից: Բայց
26 հետո մտածում եմ՝ չէ՞ որ սա այնուամենայնիվ ազատ Հայաստանի պառլամենտն է, չէ՞ որ սա
27 Հայկական կառավարությունն է ... երբ տեսնում եմ մեր զորքերը, որ անցնում են փողոցներով
28 իրենց ցնցոտիների մեջ, ասում եմ՝ չէ՞ որ սա հայկական զորք է: Մեծ սիմվոլը արդեն
29 իրականացել է, դարավոր անեծքը վերացել, մնացածը կգա իր կարգին...»:

Ուշադրություն.

առանց շտապելու կարդացե՛ք նշյալ հատվածները և ուսումնասիրե՛ք նկարը: Պատասխանե՛ք հետևյալ հարցերին՝ հիմնավորելով տրված փաստաթղթերում առկա փաստերով: Ձեր հղումներում նշե՛ք, թե տեքստի որ տողերից եք վերցրել (փակագծերում նշելով տողերի համարները) Ձեր մոտեցումը հիմնավորող փաստարկները:

Հարց ա.

Պետական կառավարման ինչպիսի՞ կարգ ուներ Հայաստանի Առաջին Հանրապետությունը (Նախագահական, խորհրդարանական, կիսանախագահական, կիսախորհրդարանական, միապետական և այլն):

Հարց բ.

Նկարում և Նամակում առկա ինչպիսի՞ փաստերով առավել դիպուկ կներկայացնեիք Հայաստանի Առաջին Հանրապետության տնտեսության վիճակը 1919 թվականի դրությամբ:

Հարց գ.

Հովհաննես Քաջազնունին վարչապետի իր զբաղեցրած պաշտոնին ավելի շատ համապատասխանում էր որպես անհատականություն, թե՞ որպես պետական արհեստավարժ գործիչ:

Հարց դ.

Դատելով Հովհաննես Քաջազնունու խոսքերից՝ ինչպե՞ս կգնահատեք Հայաստանի Առաջին Հանրապետության կենսունակությունը ծառացած ներքին և արտաքին մարտահրավերների առջև:

«խորհուրդների» երկիրը. Հայաստանի խորհրդայնացումը:



Փաստաթուղթ 1 – խորհրդային ժամանակների պատճառ, որտեղ ներկայացված են խորհրդային կարգերի և Արևմուտքի կապիտալիստական իրականությունների միջև հակասությունները: Առաջին պատկերի ներքևում գրված է «կամ մահ կապիտալին», իսկ մյուս նկարի ներքևում՝ «կամ մահ կապիտալի ոտքի տակ»:

Փաստաթուղթ 2 – ստորև ներկայացված են հատվածներ Համբարձում Կարապետյանի, «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, 1920», Երևան, 1961 թ., գրքի էջ 320-321-ից:

1 «...Այդպիսով ամերիկա-անգլիական ինտերվենտների օգնությամբ ու
2 դիրեկտիվներով, ներքին ու արտաքին հակասովետական ուժերը միասնական ճակատ
3 էին կազմել Հայաստանի բանվորների ու գյուղացիների փառապանծ ապստամբությունը
4 ճնշելու, ժողովրդական լայն մասսաների համար անտանելի, Անտանտի
5 իմպերիալիստական ծառայագրված դաշնակների երերվող տիրապետությունը փրկելու
6 նպատակով...»:

7 «...Մայիսյան ապստամբությունը պարտվեց, բայց այդ «պարտությամբ» իսկ նա
8 հայտարարեց դաշնակցականների «հանրապետության» անհուսալի սնանկությունը, -
9 նշել է Խանջյանը, լուսավորելով մասսաների ազատագրության խորհրդային
10 սոցիալիստական ճանապարհը: Մայիսյան մեր պարտությունը միայն ժամանակավոր
11 կարող էր լինել, որովհետև էլ ավելի խորացան այն հակասությունները, որոնք
12 հսկայական արագությամբ խարխուլում էին բուրժուական Հայաստանի հիմքերը»:

13 «...Հայ ժողովրդի համար ստեղծված ծանր վիճակը մեծապես մտահոգում էր
14 Սովետական պետությանը, Կոմունիստական պարտիային, մեծ Լենինին: Ահա այդ
15 չափազանց ծանր օրերին, նոյեմբերին 9-ին, Ռուսաստանի Կոմունիստական
16 (բոլշևիկների) պարտիայի Երկրային Կոմիտեի բյուրոյի, Ադրբեջանի Կոմունիստական
17 պարտիայի և Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմների միացյալ նիստը որոշում է, որ
18 անհրաժեշտ է փրկել հայ ժողովրդին կործանումից, իսկ այդ միայն հնարավոր է
19 դաշնակների տիրապետության տապալման և սովետական կարգերի հաստատման
միջոցով...»:

Փաստաթուղթ 3 – ստորև ներկայացված է հատված Համբարձում Կարապետյանի, «Սևրի պայմանագիրը Հայոց ճակատագրում», Երևան, 2004 թ., գրքի էջ 124-ից:

1 «...Շարունակվող հայ-թուրքական պատերազմում Կարսի անկումից հետո Սևրի
2 պայմանագրի նշանակությունը լրջորեն տատանվում էր և Ավ. Ահարոնյանը (1866-1948
3 թթ., գրող, Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության հայտնի անդամ,
4 հայկական կողմից Սևրի պայմանագրի ստորագրողներից) ստիպված էր լինում
5 համոզմունք հայտնել, թե, եթե «Դաշնակիցները Հայաստանին օգնության չհասնեն,
6 բոլշևիկները Թուրքիայի հետ կստիպեն Հայաստանին ընդունել խորհրդային
7 իշխանություն»: Չենք կարող չխոստովանել Ավ. Ահարոնյանի ապագան կռահելու
8 ընդունակությունը, որը դիվանագետի բարձրագույն արժանիքն է: Փարիզը
9 հետագոտելուց հետո, Ավ. Ահարոնյանը, զորավար Բագրատունու հետ, 1920թ. նոյեմբերի
10 11-ին մեկնած է եղել Լոնդոն «խնդրելու Մեծ Բրիտանիայի միջամտությունը...»:

Համբարձում Նիկոլայի Կարապետյանի (1927-2004 թթ.) կենսագրությունից հատված. հայ խորհրդային պատմաբան, պրոֆեսոր (1973 թ.), ԽՄԿԿ (խորհրդային Միության Կոմունիստական կուսակցություն) անդամ 1954 թվականից: Ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1957-1961 թթ.-ին եղել է Հայպետհրատի (պետական հրատարակչություն) քաղաքական գրականության խմբագրության վարիչ: 1976թ.-ից Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչն էր: Չբաղվում էր ԽՄԿԿ, կոմերիտմիության և հայ հասարակական մտքի պատմության հարցերով:

Ուշադրություն.

առանց շտապելու, մանրամասն կարդացե՛ք նույն հեղինակի երկու տարբեր գրքերից բերված հատվածները, ինչպես նաև այդ գրքերի վերնագրերը, հեղինակի սեղմ կենսագրությունը և ուսումնասիրե՛ք նկարը: Պատասխանե՛ք հետևյալ հարցերին՝ հիմնավորելով տրված հատվածներում առկա փաստերով: Ձեր հղումներում նշե՛ք, թե տեքստի որ տողերից եք վերցրել (փակագծերում նշելով տողերի համարները) Ձեր մոտեցումը հիմնավորող փաստարկը:

Հարց ա.

Ի՞նչ կապեր կարող եք ներկայացնել գրքերում հեղինակի արտահայտած աշխարհայացքային մոտեցումների և նկարում պատկերվածի միջև:

Հարց բ.

Ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան երկու գրքերում հեղինակի արտահայտած տեսակետների, քաղաքական-հասարակական հայացքների միջև:

Հարց գ.

Ինչպիսի՞ հանգամանքներ են ազդել հեղինակի քաղաքական-հասարակական հայացքների վրա իր երկու գրքերը գրելիս:

Հարց դ.

Ինչո՞ւ և ինչպե՞ս են ազդել այդ հանգամանքները հեղինակի հասարակական դիրքորոշումների վրա: